



ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2022 թվականի թիվ 101-Ս

ք. Երևան

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2022 թվականի հունիսի 09-ին հարուցված թիվ 12 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողով մուտքագրված «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմում-գանգատում նշված է «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից ոչ սեփական տեսալսողական հաղորդումներն առանց դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի հեռարձակելու փաստի վերաբերյալ:

Ըստ Ընկերության՝ Հեռարձակողի կողմից առանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի 2022 թվականի մայիսի 15-ին «Սինեման» տեսալսողական ծրագրով հեռարձակվել է ЭЙС ВЕНТУРА. РОЗЫСК ДОМАШНИХ ЖИВОТНЫХ («ACE VENTURA: PET DEDECTIVE 1X96, ԱՄՆ 1994թ.), իսկ սույն թվականի մայիսի 16-ին՝ ОХОТНИК ЗА ГОЛОВАМИ (HEADNUTERS(1X101, Նորվեգիա, Շվեդիա, Գերմանիա 2011թ.)) Ֆիլմերը (այսուհետ՝ Ֆիլմեր), որոնց Հայաստանի Հանրապետությունում տարածելու բացառիկ իրավունքը պատկանում է «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերությանը: Ընկերությունը հայտնել է նաև, որ պայմանագրային պարտավորություն է կրում իրավատիրոջ հանդեպ՝ իր իրավունքները երրորդ անձանց խախտումներից պաշտպանելու ուղղությամբ:

Դիմումում նշված է նաև, որ Ընկերության և Հեռարձակողի միջև ոչ սեփական տեսալսողական հաղորդումների հեռարձակման իրավունքի տրամադրման լիցենզիոն պայմանագիր կնքված չէ, որը թույլ կտար Հեռարձակողին Հայաստանի Հանրապետության տարածքում հեռարձակել Ֆիլմերը և խնդրում է իրավախախտման հանգամանքը պարզելու դեպքում Հեռարձակողին ենթարկել համապատասխան պատասխանատվության:

Ընկերությունը 2022 թվականի հունիսի 09-ին Հանձնաժողով է ներկայացրել 2019 թվականի նոյեմբերի 27-ին «TREBLO MEDIA LTD» ընկերության հետ կնքված բացառիկ լիցենզիայի պայմանագիրը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության տարածքում Ֆիլմերը տարածելու բացառիկ օգտագործման իրավունքը պատկանում է իրեն:

2022 թվականի հունիսի 20-ին Ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել Ֆիլմերի մի քանի թույլեանոց տևողությամբ տեսաձայնագրությունը: Հանձնաժողովն ուսումնասիրել է Ֆիլմերի տեսաձայնագրությունը և պարզել, չնայած այն հանգամանքին որ այդ ձայնագրությունից պարզ չէ, թե որ օրվա հեռարձակում է, սակայն պարզ երևում է Ֆիլմերի ընթացքում Հեռարձակողի խորհրդանիշը:

Հանձնաժողովը դեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմումը՝ 2022 թվականի հունիսի 09-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի հունիսի 13-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը գրավոր պարզաբանում չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում»:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում, սակայն Հեռարձակողի կողմից ոչ սեփական տեսալսողական հաղորդումն առանց դրա հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի հեռարձակելու փաստ է արձանագրվել:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածը սահմանում է.

«Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 56-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. «ԱՐՄԵՆԻԱ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

Վ. ՕԶԱՆՅԱՆ

14 հուլիսի 2022թ.

ք. Երևան